ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 106Ա

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 100-ԱՄՅԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԵԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 22/09/2025թ. N01/07-2/5698-2025 գրությունը

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

Հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը 1993 թվականին հոկտեմբերի 1-ը հայտարարել է «Տարեցների միջազգային օր» և Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի նշվում է այդ տոնը, ուստի տարեցների միջազգային օրվա կապակցությամբ Եղեգիս համայնքի ստորև ներկայացված 100-ամյա բնակիչներին ըստ արժանվույն մեծարելու կապակցությամբ՝ Եղեգիս համայնքի 2025թ. բյուջեի գործառնական դասակարգման 10.04.01-ընտանիքի անդամներ և զավակներ ոլորտի 4729-այլ նպաստներ բյուջեից հոդվածից տրամադրել յուրաքանչյուրին 100 000-ական ՀՀ դրամ (մեկ հարյուր հազար)՝

1)Արտաբույնք գյուղի բնակիչ Բաբլոյան Եփրեմ Հակոբի (ծնված 01/07/1925թ.),

2)Քարագլուխ գյուղի բնակիչ Հովսեփյան Արծվիկ Մամիկոնի (ծնված 01/07/1925թ.):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 24
Եղեգիս համայնք